ՀՀ ԿԳՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
«MKHITAR SEBASTATSI» EDUCATIONAL COMPLEX
MINISTRY OF SCIENCE AND EDUCATION OF THE REPUBLIC OF ARMENIA
0064, Երևան. Ռաֆֆու 57 հեռ: (374 10) 74 72 46. (374 91) 43 10 99 info@mskh.am www.mskh.am
Raffy 57.Yerevan, tel:(374 10)74 72 46.(374 91)43 10 99 https://www.facebook.com/mxitar.sebastaci?fref=ts

17-05-203 25. 05.2017թ.

ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Լ. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Հարգելի նախարար.

2017թ. մայիսի 19-ին ՀՀ ԿԳՆ-ում կրթահամալիրում մշակվող, իրականացվող, տարածվող հեղինակային կրթական ծրագրի ներկայացման կլոր սեղանին հանձնարարեցիք ներկայացնել հեղինակային կրթական ծրագրի ձեռքբերումները, որոնք կարելի է տարածել հանրապետության հանրակրթական դպրոցներում: Ձեզ ենք ներկայացնում կրթահամալիրի ուսումնական օրացույցով որոշված հունիսյան բաց նախագծերը՝ որպես հեղինակային կրթական ծրագրի տարածման հունիսյան հարթակ. հունիսը կրթահամալիրում ավանդաբար ուսումնական տարվա ընթացքում ունեցած ձեռքբերումների ամփոփման, նոր ուսումնական տարվա պատրաստման շրջան է, «Ուսումնական ամառ» նախագծի մեկնարկ:

- Մայիսի 29-ից հունիսի 9-ը կրթահամալիրի դպրոցները կգործեն որպես ուսումնական պլաններով որոշված ուսումնական բաց ճամբարներ՝ 1-5-րդ դասարանցիների, 6-8-րդ դասարանցիների, 10-11-րդ դասարանցիների: Ճամբարային հագեցած ծրագրով տասը օր, ուսումնական բազմազան նախագծերի իրականացման հետ՝ ամենամյա «Անտիվիրուս Կոմիտաս», ազգային-ավանդական խաղեր, հայրենագիտական ճամփորդություններ, բնապահպանական, շրջակա միջավայրի պահպանման և բարեկարգման նախագծեր, ռազմամարզական խաղեր... Ճամբարը բաց է հանրապետության՝ արդեն արձակուրդ ստացած սովորողների համար, իրենց ընտրությամբ: Առաջարկում ենք խրախուսել, որ հունիսի 5-9-ը ճամբար գործուղվեն հանրակրթական հաստատությունների մանկավարժական աշխատողներ (կարող են գալ նաև սովորողների խմբով), որոնք տեղում կծանոթանան հեղինակային

կրթական ծրագրի ուսումնական օրացույցով ճամբարային, նախագծային ուսուցման մեր փորձին, կմասնակցեն ճամբարային օրվա նախագծմանը, իրականացմանը, լուսաբանմանը: Նրանց աշխատանքը ճամբարում կամփոփվի կլոր սեղան-քննարկմամբ:

- Հունիսի 12-16-ը կրթահամալիրում ամենամյա բաց «Բանգլադեշյան պլեներ 2017» փառատոնն է՝ իր թարգմանչական, թատերական, երաժշտության-պարի, կինո-ֆոտոյի, արտ-միջավայրի հանրակրթական ստուգատեսներով: Փառատոնին, դրա առանձին ստուգատեսին հանրապետության, Արցախի, Վրաստանի սովորողների խմբերը մասնակցում են իրենց ուսումնական նախագծերով: ՀՀ ԿԳՆ աջակցությամբ գործուղված մանկավարժական աշխատողների խումբը կարող է մասնակցել՝ ծանոթանալու հանրակրթական ստուգատեսների միջոցով սովորողների նախասիրությունների բացահայտման և զարգացման, ուսուցման կազմակերպման մեր փորձին: Նրանց աշխատանքը պլեներում կամփոփվի կլոր սեղան-քննարկմամբ:
- Հունիսի 19-30-ը կրթահամալիրում կգործի մանկավարժական աշխատողների ամենամյա հունիսյան բաց ճամբարը: Ճամբարին հանրակրթական այլ հաստատությունների մանկավարժական աշխատողները կարող են մասնակցել իրենց ցանկությամբ, լրացնելով մասնակցության հայտը, կամ դպրոցի գործուղումով: Բացի նրանից, որ ճամբարական մանկավարժները գործուն մասնակցություն կունենան կրթահամալիրի մասնագիտական խմբերի՝ ուսումնական տարվա ընթացքում նախագծային-բլոգային ուսուցման, տեխնոլոգիական հանրակրթության կազմակերպման ձեռքբերումներին-արդյունքներին, արվեստանոց-արհեստանոց-լաբորատորիաների մեր համակարգին, կրթական բաց միջավայրում հանրակրթության կազմակերպմանը, նոր ուսումնական տարում դրվող խնդիրներին, կարող են մասնակցել անընդհատ սովորող ուսուցիչների համար կազմակերպվող օտար լեզվի, մարզական դասընթացների, կրթահամալիրի մանկավարժական երգչախմբերի, պարի պարապմունքների, ընդհանուր պարապմունքների կազմակերպմանը:

- Հուլիս-օգոստոսին կրթահամալիրում 2017-2018 ուսումնական տարվա մենթոր-դասավանդողները կկազմակերպեն մանկավարժական եռօրյա-քառօրյա ճամբարներ, որոնց մասին առանձին կտեղեկացնենք:
- Մենթոր դասավանդողի, մենթոր-տնօրենի բաց լաբորատորիան կգործի ուսումնական ողջ տարվա ընթացքում՝ հնարավորություն տալով հանրակրթական հաստատության աշխատողին ֆիզիկական միջավայրում և հեռավար ծանոթանալու, քննարկելու, պարզաբանելու իր հարցերը, սովորողների հետ մասնակցելու կրթահամալիրի ուսումական օրացույցով որոշված հանրակրթական բաց ստուգատեսներին, ուսումնական բաց նախագծերին:

Հանրապետության մարզերից գործուղված, Արցախից, Վրաստանից իրենց նախագծերով եկող մանկավարժական աշխատողները, ճամբարի մասնակից սովորողները կհյուրընկալվեն կրթական փոխանակումների կացարաններում:

Ուսումնական, ստուգատեսային ճամբարների ծրագրերը և նախագծերը պատշաճ ներկայացվում են mskh.am-ում, դպրոցների ենթակայքերում, դասավանդողների և սովորողների բլոգներում, մանկավարժական ճամբարների ծրագրերը, դրանց մասնակցության հայտերը՝ mskh.am-ում, կրթահամալիրի մանկավարժության կենտրոնի, մանկավարժական վերապատրաստումների բլոգներում, լուսաբանվում են:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝ ***Ա. ԲԼԵՅԱՆ***

info@mskh.am